Ավետիք Իսահակյան

Մարտիրոս Սարյանին, 1925թ . , մայիսի 26, Վենետիկ

Շա՜տ սիրելի Մարտիրոս.
Նամակդ ստացել եմ իր ժամանակին, և ուզածդ իրերի պատվերը տվել եմ, բայց մինչ այսօր փողը չստացա, ուղարկախդ փողը. Պոստան հայտնեցի՝ նույնպես դեռ չի ստացել: Ի՞նչ է եղել՝ չգիտեմ: Դու ևս հետաքրքրվիր իմանալու. Գուցե կորել է…
Քո նամակը ստանալուց առաջ քեզ, Երևան, գրել էի արդեն, երևի հիմա ստացել ես:
Չարենցը եկավ, գնաց, և անշնորհքը մի տող չգրեց. Չգիտեմ ու՞ր է հիմա:
Ես լավ եմ, բայց շատ տխուր եմ. Ի՞նչ պիտի լինի օտար երկրում ապրող մարդու կյանքը. ո՛չ այս ենք, ո՛չ այն. քաշ ենք գալիս:
Բարևիր Մոսկվա եղող իմ բարեկամներին: Լսում եմ, որ այս տարի մեր հայրենիքի բերքը գեշ է. Մրսել են ցանքերն ու այգիները. սով չլինի՞, ի սեր աստծու…
Շատ և շատ ջերմ բարևներ մեզնից:

Համբույրներով,
քո՝ Ավետիք
Հ. Spec. A. Issahakian, 2266. Dorsoduro
Le Marchi, Venezia.